Դատական Գործ N: ԵԿԴ/2468/02/08

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	29-08-2008
Հայցվոր/դիմող	
Անուն:	Հայհեղինակ հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ
Հասցե:	Կորյունի 19ա
Ներկայացուցիչ	
Անուն	Սուրեն
Ազգանուն	Բաղրամյան
Հասցե	Աբովյան 31շ, բն 20
Պատասխանող	
Անուն:	Երկիր Մեդիա հեռուստաընկերություն
Հասցե:	Չարենցի 94
Քաղաքացիական գործի ստացման կարգը:	Առաջին անգամ
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	659599 դրամի պ/մ
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	11.1
Պետական տուրք:	12940
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Հակընդդեմ հայցի ներկայացման ամսաթիվը:	
Հակընդդեմ պահանջ:	
Պետական տուրք:	

Ամսաթիվ:	29-08-2008
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Դատավորի անուն:	Արայիկ Միխայիլի Մելքումյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Դատավորի անուն:	

Որոշման ամսաթիվ:	01-09-2008

Դատաքննության ամսաթիվ:	09-10-2008
Դատաքննության ամսաթիվ:	27-11-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	02-09-2008
Այլ նշումներ:	
Ժամ:	

Հայցի լուծման ամսաթիվ:	11-12-2008
Հայցի լուծումը:	Մերժվել է
Հոդված	
Հոդված	130-132
Հակընդդեմ հայցի լուծումը :	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	

Դատական ակտ (վճիռ, որոշում):	Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 11.12. 2008թ. ք.Երևան Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը Դատավոր Ա. Մելքումյան Քարտուղարությամբ Ա. Գալիկյանի Մասնակցությամբ՝ Հայցվորի ներկայացուցիչ Ս.Բաղրամյանի Պատասխանողի ներկայացուցիչ Դ.Հակոբյանի Դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիականգործն ըստ հայցի «Հայհեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ ընդդեմ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության՝գումարի բռնագանձման պահանջի մասին ՊԱՐԶԵՑ Գործի դատավարական նախապատմությունը 29.08.2008թ.-ին «Հայհեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության՝ 659 599 ՀՀ դրամգումարի բռնագանձման պահանջի մասին: 01.09.2008թ.-ին սույն քաղաքացիականգործն Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Մելքումյանիս կողմից վարույթ է ընդունվել և նշանակվել դատաքննության 2008թ.-ի հոկտեմբերի 09-ին: Հայցվորի իրավական դիրքորոշումը Դիմելով դատարան հայցվորը հայտնել է, որ պատասխանողը համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1134-րդ և «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածների պարտավոր էր իրենց հետ կնքելու լիցենզային պայմանագիր: Քանի որ «Հայհեղինակ» հեղինակների իրավունքների

	պաշտպանության հասարակական կազմակերպությունը ստեղծվել է հեղինակային իրավունքի օբյեկտների իրավատերերի իրավունքների պաշտպանությունն ապահովելու նպատակով և հանդիսանալով ՀՀ տարածքում հեղինակային իրավունքի իրավատերերիգույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպություն՝ 03.03.2008թ.-ին հայց է ներկայացրել Երևանի քաղաքացիական դատարան: 04.07.2008թ.-ին Երևանի քաղաքացիական դատարանում՝ քննվել է քաղաքացիականգործն ըստ հայցի՝«Հայհեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ-ն ընդդեմ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության՝ լիցենզային պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջի մասին, հայցը բավարարվել է, և թիվ ԵՔԴ 0322/02 վճիռը ստացել է օրինական ուժ, քանի որ պատասխանողի կողմից չի բողոքարկվել: Մինչև 03.03.2008թ.-ին Երևանի քաղաքացիական դատարան հայց ներկայացնելը պատասխանողի ոչ իրավաչափգործողությունները վիճարկելու համար, 25.01.2008թ.-ին իրենց և «ՍԻԶԱՔ»-ի (Հեղինակների և Երգահանների Կոնֆեդերացիա) միջև կնքվել է ֆինանսական օժանդակություն տրամադրելու պայմանագիր: Օժանդակության պայմանագրի 1-ին հոդվածում նշվել է ֆինանսական օժանդակությանգումարի չափը, որը կազմել է 4.370 /չորս հազար երեք հարյուր յոթանասուն/ եվրո (մոտ 1.944.560 /մեկ միլիոն ինը հարյուր քառասունչորս հազար հինգ հարյուր վաթսուն/) ՀՀ դրամ: Օժանդակության պայմանագրի 2-րդ հոդվածում նշվել է՝ «Օժանդակության պայմանագրի 1-ին հոդվածում հիշատակվածգումարը պետք է օգտագործվի ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿ-ի կողմից թվով 3 /երեք/ հայցերի հետ կապված ծախսերը հոգալու համար, որոնք արվել են հետևյալ օգտագործողների դեմ. «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության, «Օմեգա»գիշերային ակումբի և «Սայաթ Նովա» ռեստորանային համալիրի: Նույն պայմանագրի 3-րդ հոդվածում նշվել է, եթե ՍԻԶԱՔ–ի իրավաբանական օժանդակության ծառայությունը հատկացվել է դատական ծախսերի համար, որոնք ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿ-ը պետք է փոխանցի նախքան հայցի որոշումը կամ նախքան դրան ընթացք տալը կամ հօգուտ ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿ-ի դրանց լուծումը, ապա ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿ-ը պետք է փոխհատուցի ՍԻԶԱՔ-ին համապատասխանգումարը նրա կողմից վճարելի ծախսերը և վարձերը ստանալուց հետո: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի՝ վնասներ են իրավունքը խախտած անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրագույքի կորուստը կամ վնասվածքը, ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր/բաց թողնված օգուտ/: Պատասխանողի ոչ իրավաչափգործողությունները վերացնելու համար հայցվորը 18.02.2008թ.-ին «Դիֆենս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր իր շահերը դատարանում ներկայացնելու համար: Համաձայն պայմանագրի 1.2 կետի՝ կատարողը այսինքն ընկերությունը, պարտավորվում է ընդհանուր իրավասության դատարան ներկայացնել «Պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջի մասին» 3 հայցադիմում և այդ հայցադիմումների հիման վրա նույն դատարանում հարուցվածգործերով դատական նիստերի ընթացքում իրականացնել դատական ներկայացուցչություն: Պայմանագրի 3.1 կետով ծառայությանգինը սահմանվել է 1940000 /մեկ միլիոն ինը հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը: Հայցվորը Ընկերությանը մեկ դատականգործի համար վճարել է 646666 /վեց հարյուր քառասունվեց հազար վեց հարյուր

վաթսունվեց/ ՀՀ դրամ (1940000/3= 646666):
Այն, որ պատասխանողը պարտավոր էր և չի ցանկացել հայցվորի հետ կնքել լիցեզային պայմանագիր, այդ հանգամանքը ապացուցման կարիք չունի, քանի որ այն արդեն հաստատված հանգամանք է դարձել թիվ ԵՔԴ 0322/02 քաղաքացիականգործով օրինական ուժի մեջ մտած վճռով:
Եթե պատասխանողը կատարեր ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր պարտականությունները, ապա անհրաժեշտություն չէր առաջանա, որպեսզի հայցվորը հեղինակների խախտված իրավունքները վերականգնելու համար 25.01.2008թ.-ին «ՍԻԶԱՔ»-ի հետ կնքեր ֆինանսական օժանդակություն տրամադրելու, իսկ Ընկերության հետ ծառայությունների մատուցման պայմանագրերը:
Խնդրել են համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի պատասխանողից հօգուտ հայցվորի բռնագանձել 659 599/վեց հարյուր հիսունինը հազար հինգ հարյուր իննսունինը/ դրամ, որից 646 666/վեց հարյուր քառասունվեց հազար վեց հարյուր վափթսունվեց/ դրամը 18.02.2008թ.-ին կնքված պայմանագրիգումար, իսկ 12 933 /տասներկու հազար ինը հարյուր երեսուներեք/ դրամը նախապես վճարված պետական տուրքիգումար:
Գործի քննության ընթացքում հայցվորի ներկայացուցիչը հայցը պնդել է ամբողջությամբ և խնդրել այն բավարարել:
Պատասխանողի իրավական դիրքորոշումը
Պատասխանողի ներկայացուցիչը դատարանին հայտնել է, որ ինքը առարկում է հայցադիմումին, քանի որ հայցվոր կողմը չի հիմնավորում այն փաստը, որ իրավաբանական ծառայություն մատուցելու ընթացքում ծախսվել է 646 666/վեց հարյուր քառասունվեց հազար վեց հարյուր վափթսունվեց/ ՀՀ դրամ, քանի որ հենց կողմերը կարող էին նույն տարբերակով պահանջ ներկայացնել դատարան շատ ավելի մեծգումարի բռնագանձման պահանջով, հետևաբար գտնում են, որ հայցը պետք է մերժվի:
Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը
04.07.2008թ.-ին Երևանի քաղաքացիական դատարանում՝ քննվել է քաղաքացիականգործն ըստ հայցի՝«Հայհեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ-ն ընդդեմ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության՝ լիցենզային պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջի մասին, հայցը բավարավել է, և թիվ ԵՔԴ 0322/02 վճիռը ստացել է օրինական ուժ և «Հայհեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ-ն շահերը ներկայացրել են լիազորված անձինք Արարատ Անտոնյանը և Սուրեն Բաղրամյանը:
25.01.2008թ.-ին Հայհեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ և «ՍԻԶԱՔ»-ի (Հեղինակների և Երգահանների Կոնֆեդերացիա) միջև կնքվել է ֆինանսական օժանդակություն տրամադրելու պայմանագիր:
Օժանդակության պայմանագրի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Օժանդակության պայմանագրի 1-ին հոդվածում հիշատակվածգումարը պետք է օգտագործվի ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿ-ի կողմից թվով 3 /երեք/ հայցերի հետ կապված ծախսերը հոգալու համար, որոնք արվել են հետևյալ օգտագործողների դեմ. «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության, «Օմեգա»գիշերային ակումբի և «Սայաթ Նովա» ռեստորանային համալիրի:
18.02.2008թ.-ին Հայհեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ-ն «Դիֆենս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր իր շահերը դատարանում ներկայացնելու համար:
Պայմանագրի 3.1 կետով ծառայությանգինը սահմանվել է 1940000 /մեկ միլիոն ինը հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:
Դատարանի իրավական վերլուծությունները
Դատարանը, ուսումնասիրելովգործի հանգամանքները և

ներկայացված ապացույցները, յուրաքանչյուր ապացույցգնահատելովգործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ,գտավ, որ հայցադիմումը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.
Դատարանը հաստատված համարեց, որ 04.07.2008թ.-ին Երևանի քաղաքացիական դատարանում՝ քննվել է քաղաքացիականգործն ըստ հայցի՝ «Հայհեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ-ն ընդդեմ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության՝ լիցենզային պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջի մասին և հայցը բավարարել է, և ԵՔԴ 0322/02 վճիռը ստացել է օրինական ուժ, սակայն դատարանըգտավ, որ «Հայհեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ-ն շահերը քաղաքացիական դատարանում ներկայացրել են հայցվորի կողմից լիազորված Արարատ Անտոնյանը և Սուրեն Բաղրամյանը: Տվյալ դեպքում դատարանը հանգեց այն եզրահանգմանը, որ այսգործով բոլոր ծախսերը վճարվել են «Դիֆենս» ՍՊԸ-ին, իսկ իրավաբանական օգնությունը կապված դատական պաշտպանության հետ իրականացվել է ոչ թե «Դիֆենս» ՍՊԸ-ն, այլ Արարատ Անտոնյանը և Սուրեն Բաղրամյանը, իսկ վերջիններիս վերաբերյալ ապացույց կամ ապացույցներ այն մասին, որ հանդիսանում են «Դիֆենս» ՍՊԸ-ի աշխատակիցներ կամ լիազորված անձինք այսգործով դատարան չի ներկայացվել:
Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17 հոդվածի անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:
Վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրագույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաեւ չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):
Նման պայմաններում հայցվորը հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածը դատարանին բավարարար ապացույց չներկայացրեց, որ 646 666 /վեց հարյուր քառասունվեց հազար վեց հարյուր վափթսունվեց/ ՀՀ դրամը 18.02.2008թ.-ին կնքված պայմանագրիգումարն է, այսինքն նշված վճարվածգումարը ծախսվել է՝ 04.07.2008թ.-ին Երևանի քաղաքացիական դատարանում՝ քննված քաղաքացիականգործն ըստ հայցի՝ «Հայհեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ-ն ընդդեմ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության՝ լիցենզային պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջի հայցվորին իրավաբանական պաշտպանության ծառայության համար:
Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածիգործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը և նույն հոդվածի 2-րդ կետիգործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ 130-132 հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Տ

«Հայհեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ-ի հայցն ընդդեմ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության՝ 659 599 /վեց հարյուր հիսունինը հազար հինգ հարյուր իննսունինը/ դրամ բռնագանձման պահանջի մասին, մերժել:
Պետական տուրքի հարցը համարել լուծված:

	Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին: Սույն դատական ակտը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում: ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
Ամսաթիվ:	12-01-2009
Այլ նշումներ:	
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	12-01-2009
էջերի քանակը:	62
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	12-01-2009
էջերի քանակը:	62
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	
Գործն ուղարկվել է:	14-01-2009
Ուր:	
Ուր:	վերաքննիչ քաղ դատարան
Գրության համարը:	
Գրության համարը:	Ե-372
Գործը ստացվել է:	
Ներկայացվել է դիմում միջնորդություն:	
Ամսաթիվ:	12-01-2009
Ամսաթիվ:	02-03-2009
Ամսաթիվ:	02-03-2009
էջերի քանակը:	89
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	
Ուր:	
Գրության համարը:	
Գործը ստացվել է:	
Ներկայացվել է դիմում միջնորդություն:	

Դատական Գործ N: ԵԿԴ/2468/02/08

Ամսաթիվ:	09-01-2009
Բողոք բերող անձը	
Անուն:	Հայիեղինակ հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ
Հասցե:	Կորյունի 19ա
Ում կողմից է բերվել բողոքը:	Հայցվոր
Պետական տուրք:	10000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխան բերող անձը	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	11.12.08 մերժվել է
Գործի համարը:	ԵԿԴ/2468/02/08

Ամսաթիվ:	19-01-2009
Վիճակագրական տողի համարը:	11.1
Գործի համարը:	ԵԿԴ/2468/02/08
Գործը բաղկացած է (հատոր / էջերի քանակ):	62

Ամսաթիվ:	19-01-2009
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Արսեն Սամվելի Մկրտչյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Նոյեմ Հովսեփյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Էդուարդ Աղաբեկի Մուրադյան

Որոշման ամսաթիվ:	22-01-2009
Ժամկետ:	18-02-2009
Որոշման հիմքը	
Հոդված	213 Մաս 3

Գործը հանձնվել է գրասենյակ :	24-02-2009

էջերի քանակ:	89
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Գործն ուղարկվել է:	25-02-2009
Ուր:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Գրության համարը:	
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	

Փաստաթուղթը տպվել է www.datalex.am պորտալի կողմից 27 Մայիս 2011